արձանագրում չի կատարվել, սակայն այս պարագայում ևս առկա են անհամապատասխանություններ՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ–ի կողմից ներկայացված դիմում–հայտարարությանը կից ներկայացված՝ «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթղթում և «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-165/24» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրում, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրով նախատեսվել է հետևյալը՝

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը՝ 9, (...) ***<u>EN 1073-2 կամ համարժեքը</u>***, մինչդեռ «Տեքսուորլդ» ՍՊԸ–ի կողմից առաջարկվել է ***<u>TY Y 25661375.01-99՝</u>*** միևնույն ժամանակ չի ներկայացվել **<u>որևէ հիմնավորում</u>**, որ իր կողմից ներկայացվածը համարժեք է հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսվածին:

Ավելին, Դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ «Տեքսուորլդ» ՍՊԸ–ն ունեցել է նաև գնման առարկայի բնութագրերի, ինչպես նաև հրավերի պահանջների իրավաչափության հարցը վիճարկելու՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46–րդ հոդվածով նախատեսված հնարավորություն, մինչդեռ վերջինս չի իրացրել նաև այդ իրավունքը:

Հիմք ընդունելով վերոգրյալ պատճառաբանությունը՝ Դատարանը գտնում է, որ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի՝ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-165/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 2024 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 2 արձանագրությունը՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտն անհամապատասխան, անբավարար գնահատելու և մերժելու մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է մերժման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնական է այն պահանջը, որի բավարարումը կամ մերժումը կանխորոշում է դրանից ածանցվող պահանջների լուծումը:

Տվյալ դեպքում Դատարանն արձանագրում է, որ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի պահանջը՝ անվավերության հետևանքներ կիրառելու մասին, հանդիսանում է ածանցյալ պահանջ, քանի որ դրա լուծումը կարող է կանխորոշվել միայն «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-165/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 2024 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 2 արձանագրությունը՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտն անհամապատասխան, անբավարար գնահատելու և մերժելու մասով անվավեր ճանաչելու պահանջի բավարարման կամ մերժման դեպքում, ուստի նման պայմաններում, երբ այն ենթակա է մերժման, Դատարանը գտնում է, որ մերժման է ենթակա նաև վերջինիս կողմից ներկայացված ածանցյալ պահանջը՝ անվավերության հետևանքներ կիրառելու մասին:

–

<u>6. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանն արձանագրում է, որ սույն գործով Հայցվորի կողմից նախապես վճարվել է հայցադիմումի ներկայացման համար անհրաժեշտ պետական տուրքի գումարն, իսկ հայցը մերժվում է, ուստի Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի՝ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊԶԲ-165/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 2024 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 2 արձանագրությունը՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտն անհամապատասխան, անբավարար գնահատելու և մերժելու մասով անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am